ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ ԱԺԽՈ-006-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ հոդվածի 3-րդ մասով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ ԱԺԽՈ-006-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Իրավական ապահովման և սպասարկման բաժինը վերակազմավորման ձևով վերակազմակերպել իրավաբանական վարչության: Որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Իրավաբանական վարչություն».
2) Վարչատնտեսական վարչության շահագործման բաժինը բաժանման ձևով վերակազմակերպել շենքերի և շինությունների շահագործման և սպասարկման բաժնի և տնտեսական սպասարկման բաժնի: Որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարչատնտեսական վարչություն (մատակարարման բաժին, շենքերի և

շինությունների շահագործման և սպասարկման բաժին, տնտեսական սպասարկման բաժին, ավտոտրանսպորտային բաժին)»:

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

**2025 թվական, մարտի 3**
**Երևան**
**ԱԺԽՈ-017-Լ**